

Հռոմ եւ անդէն զկեանն զրաւեաց, չ. Ալի-
շան՝ Հայ-Վենետ. էջ 342, կը յիշէ զինքն
1661—62 վախճանեալ ի Հռոմ:

Բայց աւելի ընդարձակ եւ ճիշդ տեղե-
կութիւններ կու տայ անոր մասին իր իսկ տա-
պանագիրն, որ կը գտնուի Հռոմ, Ս. Մարիամ
Եգիպտացի եկեղեցին: Տապանագիրը հայերէն
եւ լատիններէն է. իմ ձեռքս կայ միայն հայերէն
տապանագրոյն օրինակը՝

“ՅԵՇԵՍԱԶԻՔ ԶՇՈՐՈԹՅԻ ԲՈՒԲԿ ԱՌԱ-
ՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏՆ ՈՐ ՆԱԽ ԶԵՌՆԱԳՐԵԱԼ
ԵՊՍ. ՔՐՀՊՏՈՒ ԵՒ Ի ԹՎԻՆ ՌՈՒԹԹ ԴԻՆԵԱԼ
(դաւանեալ) Ի ՀՌՕՄ ԶՀԻՏՆ (դհաւատն)
ՈՒՂՂ. ԵՂԵՒ ՅԵՏՈՅ ԱՐՔԵՊ. ՆԱԽԱՎԱՎ-
ՆՈՅ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴ ՎՆՅ (վանայ) ԵՒ ՎԻ-
ՃԱԿԻՆ ԵՐՆԱԿՅ (երնջակայ) ՍԲՅ ԿՐՊԵՏԻ.
ԻՍԿ Ի ԹՎԻՆ ՌՈՂԹ ԴԱՐՁԵԱԼ ԱՌԱՔԵՅԱԼ
ԱՅՍՐ Ի ՏՆԷ ՅԱԿՈԲԱՅ ԾՂԵՅ (իմա Զու-
ղայեցոյ) ԿԹՂԿՍԷՆ ՈՒՂՂՓՈԷՒ ՎՍ ԸՆԴՀ.
ՄԻԱԲԱՆՈՒԷ ՀԱՅՈՅ ԱԶԳԻՆ. ԶՎԻՇՏՍ ԵՒ
ԶՀԱԼԱԾԱՆՍ ԿՐԵԱՅ ԲԱԶՈՒՄՍ. ԳՈԼՈՎ
ԱՄԱՅ ԿԷ ԼԻ ԱՐԴԵԱՄԲԷ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՕՔ
ՀԱՆԳԵԱԼ Ի ՔՍ ՆՆԱՌՈՐ Զ ՕԳՈՍՏ. ՌՈԶ
ԵՒ ՀԱՅՈՅ ՌՃԻԹ:”

Սոյն հայ եւ յաջորդող լատին արձանա-
գրութեան մէջտեղը կայ անոր բոլորաձեւ կնիքը,
որուն շուրջը կը կարդացուի՝

ՅԻ ՔԻ ԾՌ ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊՏ ԵՊՍ.
Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՌՂԷ (= 1648): Իսկ բոլորա-